ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/193

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Գրիգորյան Շին» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Գրիգորյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով բաց մրցույթ, հաղորդակցման մալուխների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11711-2021 գրությամբ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 15.07.2021թ.-ի թիվ ՊՆ/02/3579-2021 գրության հիման վրա, 21.07.2021թ.-ին «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 21.07.2021թ.-ին:

22.07.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/193 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

28.07.2021թ.-ին, 30.07.2021թ.-ին և 06.08.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.08.2021թ.-ին:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 15.07.2021թ.-ի թիվ ՊՆ/02/3579-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքում «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի՝ որոշմամբ ճանաչվել էր ընտրված մասնակից:

«Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին՝ armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ և «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 9.5 կետերի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին

ներկայացնում պայմանագրի և որակավորման ապահովումները, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն վերը նշված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները (ընդհանրապես չի ներկայացրել):

Հաշվի առնելով վերոգրյալը «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 22.07.2021թ.-ին գրությամբ դիմել է «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11711-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Մասնակիցը, 28.07.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում թիվ ՍՅ-ԷՕ-2021/193 ընթացակարգը: Նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնում եմ սույն դիրքորոշումը և գտնում եմ, որ այն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

'Գրիգորյան Շին' ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ՊՆ-ի կողմից հայտարարված թիվ ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-11/1 բաց մրցույթին (այսուհետ՝ մրցույթ):

Նշված մրցույթին բացի 'Գրիգորյան Շին' ՍՊԸ-ից որևէ այլ մասնակից չի եղել:

Գնահատող հանձնաժողովի 16.06.2021թ-ի N 4 արձանագրության 4.1 կետով 'Գրիգորյան Շին' ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

21.06.2021թ-ին 'Գրիգորյան Շին' ՍՊԸ-ին armeps ոչ ավտոմատ ծանուցմամբ ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ:

Տեղական և միջազգային շուկաներում երկաթի թանկացմամբ պայմանավորված 'Գրիգորյան Շին' ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

14.07.2021թ-ի գնահատող հանձնաժողովի N 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ 'Գրիգորյան Շին' ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

'Գնումների մասին' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մրցույթի և էլեկտրոնային աճուրդի դեպքում անգործության ժամկետը առնվազն 10 օրացուցային օր է: Գնման այլ ընթացակարգերի համար անգործության ժամկետն առնվազն հինգ օրացուցային օր է:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

'Գնումների մասին' ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Սույն գործի փաստերի համաձայն 'Գրիգորյան Շին' ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկն արվել է 21.06.2021թ-ին, իսկ օրենքով սահմանված 10 աշխատանքային օրը լրացել է 02.07.2021թ-ին:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն նշել եմ, Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրը լրացել է 02.07.2021թ-ին, հետևաբար դրան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում, այսինքն՝ մինչև 12.07.2021թ-ը, պատվիրատուն պետք է Կարգի 45-րդ կետով սահմանված կարգով դիմեր լիազոր մարմնին: Այնինչ գնահատող հանձնաժողովը միայն 14.07.2021թ-ի N 5 արձանագրությամբ արձանագրել է, որ 'Գրիգորյան Շին' ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, իսկ թե երբ է

պատվիրատուն դիմել լիազոր մարմնին, դա անհասկանալի է, քանի որ ՀՀ ՊՆ տեղակալ Ս. Սահակյանի գրության վրա բացակայում է գրության կազմման ամսաթիվը, ինչպես նաև հնարավոր չէ պարզել թե այն երբ և ինչ եղանակով է այն մուտքագրվել ՀՀ ֆինանսների նախարարություն: Ամեն դեպքում ՀՀ ՊՆ տեղակալ Ս. Սահակյանի գրությունը ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ:

Գործադիրի կողմից կոնկրետ գործողությունների կատարման համար ժամկետների ամրագրումն ինքնանպատակ չէ, հետևաբար այն կիրառող մարմինները պետք է պահպանեն այն:»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելը մերժել:

Ինչպես նաև ներկայացվել է «Սլավկաբել» ՍՊԸ-ի կողմից տրամադրված գրությունը՝ որպես գրավոր ապացույց:

4. <u>ՍՑ-LO-2021/193 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հաղորդակցման մալուխների ձեռքբերման նպատակով 26.04.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Մրցույթ):

ii. Մրցույթի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) գնման առարկան է հանդիսանում հատուկ կիրառման համար հաղորդակցման մալուխների («Մալուխ Պ-296») ձեռքբերումը, որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 32571500/2, ընդհանուր քանակը նշվել է՝ 400 000 մետր:

iii. Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել միայն «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն:

iv. «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն Մրցույթի հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով (այսուհետ՝ Հավելված 1.1), առաջարկել է

մատակարարել «մալուխ Պ-296», ներկայացնելով 108 900 000 ՀՀ դրամ գումարի գնային առաջարկ:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.06.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 4.1-րդ կետի համաձայն՝ 16.06.2021թ.-ին ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն:

vi. 17.06.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից:

vii. Պատվիրատուն 21.06.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցին է ներկայացրել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

viii. Հանձնաժողովի 14.07.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ Մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով և գնման ընթացակարգի հրավերի 9.5-րդ կետով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները, ինչով պայմանավորված Հանձնաժողովի 14.07.2021թ.-ին կայացված որոշմամաբ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

ix. Նույն արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ հաշվի առնելով այն, որ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն, որը զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը (պայմանագիր չի կնքվում):

x. «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ООО “Славкабель” ընկերության գրությունը, որով վերջինս հայտնել է հետևյալը. “На Ваш запрос относительно цен на кабель П-296. Данный кабель не производится с 2013г, так как завод Амуркабель прекратил свою деятельность. Весь кабель П-296, поступает в продажу с хранения, с резерва. И цена его напрямую чависит от того, по какой цене выигран аукцион. Кабль который был у нас в продаже в начале года, продавался по цене 28-30р/м с ндс. Так как

закупался в прошлом году. Кабель продан. С начала 2021года, операторы резерва, значительно подняли стоимость на кабель П-296, и на сегодняший день она составляет от 70 до 80р/м с ндс в зависимости от количества”.

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11711-2021 գրությամբ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու

առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես

նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին

պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձն ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության

պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՓԲԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար

ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հաղորդակցման մալուխների ձեռքբերման նպատակով 26.04.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով բաց մրցույթ հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով գնման առարկան է հանդիսանում հատուկ կիրառման համար հաղորդակցման մալուխների («Մալուխ Պ-296») ձեռքբերումը, որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 32571500/2, ընդհանուր քանակը նշվել է՝ 400 000 մետր: Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով առաջարկել է մատակարարել «մալուխ Պ-296», ներկայացնելով 108 900 000 ՀՀ դրամ գումարի գնային առաջարկ: Հանձնաժողովի 09.06.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 4.1-րդ կետի համաձայն՝ 16.06.2021թ.-ին ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընտրված /հաղթող/ մասնակից է ճանաչվել «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն, ինչով պայմանավորված 17.06.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից: Պատվիրատուն 21.06.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցին է ներկայացրել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Սակայն Հանձնաժողովի 14.07.2021թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1-րդ կետով արձանագրվել է, որ Մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով և գնման ընթացակարգի հրավերի 9.5-րդ կետով սահմանված ժամկետում չի ստորագրել

պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի կատարման և որակավորման ապահովումները, ինչով պայմանավորված Հանձնաժողովի 14.07.2021թ.-ին կայացված որոշմամաբ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից, իսկ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-1/1» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը (պայմանագիր չի կնքվում):

«Գրիգորյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ООО “Славкабель” ընկերության գրությունը, որով վերջինս հայտնել է հետևյալը. “На Ваш запрос относительно цен на кабель П-296. Данный кабель не производится с 2013г, так как завод Амуркабель прекратил свою деятельность. Весь кабель П-296, поступает в продажу с хранения, с резерва. И цена его напрямую чависит от того, по какой цене выигран аукцион. Кабль который был у нас в продаже в начале года, продавался по цене 28-30р/м с ндс. Так как закупался в прошлом году. Кабель продан. С начала 2021года, операторы резерва, значительно подняли стоимость на кабель П-296, и на сегодняший день она составляет от 70 до 80р/м с ндс в зависимости от количества”.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-

ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավորություն, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորությունն անպատշաճ կատարելը, մասնավորապես սույն դեպքում՝ պայմանագիր չկնքելը, չի կարող հանգեցնել պատասխանատվության, քանի որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը: Մասնակիցը օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված (Պ-296 տեսակի մալուխի թանկացմամբ պայմանավորված), հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա

հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11711-2021 գրությամբ «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/193 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**